



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 161-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Հովհաննես Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Ջ Ե Ց.**

1. Հովհաննես Ավագյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020թ. հունիսի 10-ին:

2. Դիմողը նշում է, որ վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում ստացվում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վերանայում է դատական ակտերը, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարում է արդարադատության բուն էությունը: Ըստ դիմողի՝ օրենսդիրը դատական սխալները բաժանել է երկու խմբի՝ 1) դատական սխալներ, որոնք չեն խաթարում արդարադատության բուն էությունը, 2) դատական սխալներ, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

Դիմողի համոզմամբ՝ օրենսդիրը, կատարելով դատական սխալի նման

բաժանում, չի սահմանել այն սկզբունքները, որոնք դրված են այդ երկու կատեգորիաների սահմանազատման հիմքում: Այսինքն՝ օրենսդիրը չի սահմանել որևէ սկզբունք, որով առաջնորդվելով՝ կարելի է եզրահանգում կատարել, որ այս կամ այն դատական սխալը խաթարում է արդարադատության բուն էությունը: Ավելին՝ օրենսդրի կողմից բացահայտված չէ «արդարադատության բուն էություն» եզրույթի բովանդակությունը: Տվյալ եզրույթը, ըստ դիմողի, բավարար հստակությամբ չի ձևակերպվել, որի արդյունքում պարզ չէ, թե «արդարադատության բուն էություն» ասելով՝ ՀՀ վճռաբեկ դատարան բողոք ներկայացնող անձը ինչ պետք է հասկանա:

Դիմողը նշում է նաև, որ նշված եզրույթի բովանդակությունը բացահայտված չէ անգամ դատական պրակտիկայում: Վճռաբեկ դատարանը, իր իսկ ակտերում օգտագործելով «արդարադատության բուն էություն» եզրույթը, չի բացահայտում դրա բովանդակությունը և չի տալիս հստակ չափորոշիչներ, թե Վճռաբեկ դատարանը ի՞նչ սկզբունքներով է այս կամ այն դատական սխալը գնահատում՝ որպես արդարադատության բուն էության խաթարում կամ բացառում նման խախտման առկայությունը:

Նման պայմաններում, ըստ դիմողի, Վճռաբեկ դատարանին «տրված է» անսահմանափակ հայեցողական լիազորություն՝ իր հայեցողությամբ որոշելու բողոքը ենթակա է վարույթ ընդունման, թե ոչ, որպիսի կարգավորումն էականորեն սահմանափակում է անձի՝ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ամրագրված դատական պաշտպանության իրավունքը, քանի որ չուղղված դատական սխալները ի չիք են դարձնում դատական պաշտպանության իրավունքը՝ այն դարձնելով վերացական իրավունք:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը գալիս է այն եզրահանգման, որ Օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում տեղ գտած «արդարադատության բուն էություն» եզրույթն անձի իրավունքները սահմանափակող նորմ է, որը չի համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված իրավական նորմերի

որոշակիության սկզբունքին:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ուժով՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով անհատական դիմումներով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերը նշված նորմից բխում է, որ դիմողը միաժամանակ պետք է նաև

հիմնավոր և պատշաճ ձևով փաստարկի իր կողմից վիճարկվող նորմերի ենթադրյալ հակասահմանադրականության արդյունքում իր կոնկրետ սահմանադրական իրավունք(ներ)ի ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթ(ներ)ի կամ դրա(նց) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, պահանջներ, որոնք չպահպանելը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

**Տվյալ դեպքում, դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթը վիճարկում է դրա՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու տեսանկյունից:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, չնայած օրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջին, դրանք չեն կարող նախատեսել իրավահարաբերության բոլոր մանրամասները, քանի որ կոնկրետ իրավահարաբերության բնույթով պայմանավորված մի շարք հանգամանքներ պետք է իրենց մեկնաբանությունն ստանան հենց դատական քննության ընթացքում: Սահմանադրական դատարանն իր՝ 03.05.2016թ. ՍԴՈ-1270 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: (...) օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»:

Իրավական որոշակիության վերաբերյալ մի շարք դիրքորոշումներ արտահայտել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (Case of Busuioc v. Moldova, app. no. 61513/00, 21/12/2004) վճռում գտել է, որ «Թեև օրենքում որոշակիությունն առավել ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք

քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որ Վճռաբեկ դատարանն իր որոշումներով չի ներկայացրել համարժեք մեկնաբանություն արդարադատության բուն էություն հասկացության վերաբերյալ, և հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի, մասնավորապես, ԵԱՔԴ/0598/02/15, ՎԴ/5605/05/19, ՎԴ/0197/05/19, ՎԴ/12139/05/18 դատական գործերով արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում արդարադատության բուն էության խախտման փաստը, ներկայացնում է նաև համարժեք պատճառաբանություններ դրա վերաբերյալ՝ այդ ձևով նաև յուրաքանչյուր կոնկրետ գործով բացահայտելով «արդարադատության բուն էություն» ձևակերպման բովանդակությունը:

Արդար դատաքնության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալին կամ իրավիճակներին անդրադարձել է նաև Սահմանադրական դատարանն իր՝ 18.07.2012թ. ՍԴՈ-1037 որոշմամբ՝ շարադրելով դատական սխալների այն **ոչ սպառնիչ** ցանկը, որոնք դատական ակտի պարտադիր բեկանման հիմք են:

Դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ վերջինս ոչ միայն չի ներկայացրել բավարար հիմնավորումներ վիճարկվող նորմի ենթադրյալ իրավական անորոշության վերաբերյալ, այլ նաև իր՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման և վիճարկվող դրույթի կամ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության միջև պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ: Այսինքն՝ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական **դիմումն ակնհայտ անհիմն է**, իսկ գործի քննությունը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետի, 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Հովհաննես Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**



**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

8 դեկտեմբերի 2020 թվական  
ՍԴԱՈ-242